ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)*

Գարիկ Քեռյան

Բանալի բառեր՝ Ֆրանսիա, կուսակցություններ, կուսակցական համակարգ, բազմակուսակցություն, Սարկոզի, Օլանդ, Մակրոն, Լե Պեն:

Ֆրանսիայում քաղաքական կուսակցությունները վճռորոշ դեր ունեն երկրի պետական իշխանության բարձրագույն մարմինների կազմավորման գործում: Ե՛վ խորհրդարանի, և՛ նախագահի ընտրությունները կրում են խիստ կուսակցական բնույթ: Բացի այդ, նախագահը պարտավոր է կառավարությունը կազմել այն կուսակցության ներկայացուցիչներից, որը մեծամասնություն է կազմում պառլամենտում: Ֆրանսիան բազմակուսակցական համակարգ ունեցող պետություն է, և այն կարելի է համարել բազմակուսակցության դասական օրինակներից մեկը: Քաղաքական լայն ազատությունները և դեմոկրատական իրավունքները, որ տրված են սահմանադրությամբ, բարենպաստ պայմաններ են ստեղծում քաղաքական կուսակցությունների կազմավորման և գործունեության համար: Չնայած կուսակցությունների մեծ թվին՝ Ֆրանսիայում, մինչ 1990-ական թթ. կեսերը, հատկապես առանձնանում էին.

- երեք խոշոր կուսակցություններ, որոնք պառլամենտական ընտրություններում հավաքում էին ընտրողների ձայների 20 տոկոսից ավելին և ունեին համապատասխան կարողություններն ու հնարավորությունները կազմելու կառավարություններ: Դրանք էին՝ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը, Հանրապետությանն աջակցող միավորում (ՀԱՄ) կուսակցությունը և Միություն հանուն ֆրանսիական դեմոկրատիայի միջկուսակցական ֆեդերացիան

- երեք փոքր ընդդիմադիր կուսակցություններ, որոնք հավաքում էին ընտրողների ձայների 10-15 տոկոսը: Դրանք էին՝ Կոմունիստական կուսակցությունը, Ազգային ճակատը և Կանաչները:

Առաջինն անդրադառնանք ***սոցիալիստներին****: XX-րդ դարի սկզբին Ֆրանսիայում կազմավորվեցին երկու սոցիալիստական կուսակցություններ: Մեկը 1901-1902թթ. ձևավորված Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունն էր՝ Ժան Ժորեսի գլխավորությամբ, մյուսը 1901թ. հիմնադրված Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունն էր՝ Ժյուլ Գեդի գլխավորությամբ: 1905թ. երկու կուսակցությունների միավորիչ համագումարում, որը տեղի ունեցավ 1905թ. ապրիլին Փարիզում, հիմնադրվեց միասնական սոցիալիստական կուսակցությունը, որը մինչև 1969թ. կոչվում էր Բանվորական Ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիա (ՍՖԻՕ): Սոցիալիստները բավականին հաճախ մասնակցում էին նաև կոալիցիոն կառավարություններին[1]: ՍՖԻՕ-ի առաջնորդները այսպես կոչված «երրորդ ուժի» կոալիցիայի նախաձեռնողն ու գաղափարախոսն էին: Այս կոալիցիան, որի մեջ մտնում էին բուրժուա-կաթոլիկական ժողովրդա-հանրապետական շարժում կուսակցությունը, սոցիալիստները և ռադիկալները, իրենց բնույթով ցենտրիստական քաղաքական դաշինք էին՝ ուղղված ինչպես աջ ծայրահեղական կուսակցությունների, այնպես էլ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության դեմ: Այս կոալիցիան Ֆրանսիայում իշխանության գլուխ էր հետպատերազմյան շրջանում 1947-1951թթ.: 1951թ. ՍՖԻՕ-ն անհաջողություն կրեց պառլամենտական ընտրություններում և անցավ ընդդիմության դիրքերը: Դրանից հետո սկսվեց ՍՖԻՕ-ի աստիճանական անկումը: Նրանք*

---

* Հոդվածն ընդունվել է 21.11.18:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.թ., դոցենտ Ն. Բաղդասարյանը:

1969թ. պրեզիդենտական ընտրություններում առաջադրեցին աջերի ղեկավար Դեֆֆերի թեկնածությունը: Դեֆֆերը ջախջախիչ պարտություն կրեց՝ հազիվ հավաքելով ընտրողների ձայների 5 տոկոսը: Սոցիալիստների տարընթացությունը շարունակվեց ևս երկու տարի և միայն 1971թ. գումարված միավորիչ համագումարը հիմնադրեց նոր սոցիալիստական կուսակցություն, որը ստացավ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցություն անվանումը: Կուսակցության առաջին քարտուղար ընտրվեց Ֆրանսուա Միտերանը, որի անվան հետ է կապված նոր սոցիալիստական կուսակցության ողջ գործունեությունը: Միավորիչ համագումարը պաշտոնապես հռչակեց քաղաքական կուրսի փոփոխման և «երրորդ ուժի» քաղաքականությունից հրաժարվելու մասին: Այն կրկին հաստատվեց 1973թ. հերթական համագումարում: Մերձենալով կոմունիստների և ձախ ռադիկալների հետ՝ սոցիալիստները զգալիորեն ամրապնդեցին իրենց դիրքերը պառլամենտում: 1972թ. կնքվեց դաշինք Կոմունիստական կուսակցության հետ, որը վերաբերում էր ձախ ուժերի համատեղ կառավարական ծրագրին: Այդ ծրագիրը հավանության արժանացավ նաև ձախ ռադիկալների կողմից: Նոր սոցիալիստական կուսակցության տեղաշարժը դեպի ձախ, այնուամենայնիվ, չէր նշանակում անցում հեղափոխական կոմունիզմի դիրքերին: Միտերանյան սոցիալիզմը ներկայացվում էր որպես ազատական, հումանիստական, իրատեսական («Հնարավորության սոցիալիզմ» ինչպես նշում էր Միտերանը 1971թ.), սոցիալական ուղղվածությամբ և իրականացվող ոչ թե հեղափոխական ուժով, այլ դեմոկրատական պետության օրինական գործունեությամբ: 1974թ. պրեզիդենտական ընտրություններում ձախ ուժերի միասնական թեկնածու առաջադրվեց Ֆրանսուա Միտերանը, որը, ճիշտ է, չընտրվեց, սակայն կարողացավ հավաքել ձայների 49 տոկոսից ավելին: Համեմատած Դեֆֆերի 1969թ. հազիվ հավաքած հինգ տոկոս ձայների հետ՝ այն համոզիչ կերպով վկայում էր սոցիալիստների հեղինակության անշեղ վերելքի մասին 70-ական թթ.: Այդ վերելքը շարունակվեց նաև 80-ական թթ. սկզբներին: Սոցիալիստական կուսակցությունն իր բարձրակետին հասավ 1981թ.: Այդ տարի պրեզիդենտական ընտրություններում Ֆրանսուա Միտերանը, առաջին փուլում հավաքելով ձայների 26 տոկոսը, իսկ երկրորդում 52 տոկոսը, համոզիչ հաղթանակ տարավ դառնալով երկրի առաջին սոցիալիստ նախագահը[2]: Ամենից շատ պատգամավորներ ունենալով նաև Ազգային ժողովում սոցիալիստները իրենք կազմեցին նաև կառավարությունը և սկսած 1981թ-ից՝ շուրջ տասը տարի մնում էին Ֆրանսիայի առաջատար և ամենահզոր քաղաքական կուսակցությունը:

1981թ. սոցիալիստները իշխանության եկան՝ նպատակ ունենալով երկրում անցկացնել արմատական սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումներ: Նրանց ծրագրային փաստաթուղթը՝ «Սոցիալիստական նախագիծը» նախատեսում էր վերջ դնել կապիտալիզմին դեմոկրատական ճանապարհով, վերացնել շահագործումը և դասակարգերը, ստեղծել դասակարգային ճակատ և հիմքից փոփոխել ժողովրդի կյանքը[3]: Եվ իսկապես, իշխանության գլուխ գտնվելու տարիներին սոցիալիստները հսկայական գործ կատարեցին ժողովրդի սոցիալ-տնտեսական դրության բարելավման ուղղությամբ: Նախընտրական մրցապայքարում Միտերանի գրեթե բոլոր «110 առաջարկները» իրականացվեցին բացառությամբ մի քանիսի: Սակայն տնտեսական դժվարությունների հաղթահարման սոցիալիստական դեղատոմսերը՝ տնտեսության վերակառուցումը ազգայնացված ձեռնարկությունների, ազգայնացված բանկերի և պետական բյուջեի հաշվին, չդիմացան ժամանակի քննությանը: Այդ պատճառով 80-ական թթ. կեսերին սոցիալիստների ներքին քաղաքականությունը զգալիորեն լիբերալականացավ: Աջերի կառավարության 1986-88թթ. սեփականաշնորհած ձեռնարկությունները այլևս - չազգայնացվեցին, իսկ 1990թ. ընդունվեց կուսակցության նոր բարեփոխված ծրագիրը, որը, ի տարբերություն «Սոցիալիստական նախագծի», այլևս չուներ դասակարգային, հակակապիտալիստական և հեղափոխական երանգներ: Նոր ծրագրի հիմքում (այն կոչվեց «2000թ. նախագիծ»), դրվեց ռեֆորմիզմը, որով սոցիալիստներն արդեն նախապատվությունը տալիս էին խառը տնտեսությանը՝ շուկայական հարաբերություններով: Կուսակցական դոկտրինների վերանայումը սոցիալիստների կողմից պայմանավոր-

ված էր նաև արևելաեվրոպական կոմունիստական կարգերի փլուզմամբ: «2000 թվականի նախագիծը» ընդունվեց 1991թ. Փարիզի համագումարում և վերջնական տեսքի բերվեց և լրացվեց 1992թ. Բորդոյի համագումարում:

Երեք խոշոր կուսակցություններից հաջորդը ***Հանրապետությանն աջակցող միավորում*** *(ՀԱՄ) կուսակցությունն էր: ՀԱՄ-ը գոլիստական կուսակցության քաղաքական ժառանգորդն էր: Գեներալ Շառլ դը Գոլի կուսակցությունը կոչվում էր «Ֆրանսիական ժողովրդի միավորում», որը հիմնադրվեց 1947թ.: Նրա ցրումից հետո 1954-58թթ. գոլիստները համախմբված էին «սոցիալական հանրապետականներ» պառլամենտական ֆրակցիայի մեջ: Նրա հիման վրա 1958թ. դը Գոլի կողմնակիցները հիմնադրեցին «Նոր հանրապետության պաշտպանության միություն» կուսակցությունը: 1967թ. կուսակցությունը վերանվանվեց «Հինգերորդ հանրապետության պաշտպանության միություն», իսկ 1968թ-ից սկսեց կոչվել «Հանրապետության պաշտպանության դեմոկրատների միություն»: Կուսակցության ղեկավարությունը 50-60-ական թթ. սերտորեն կապված էր տնտեսության առաջատար ճյուղերի ազգային խոշոր մոնոպոլիաների հետ: Սակայն գոլիստների էլեկտորատը հետպատերազմյան տասնամյակների ընթացքում բավականին ընդլայնվեց ի հաշիվ աշխատավորական խավերի: Աշխատելով ամրապնդել իր ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա՝ կուսակցությունը այդ ժամանակվանից հանդես է գալիս դասակարգային տարբերությունների վերացման, ձեռնարկությունների շահույթների յուրացմանը աշխատավորների մասնակցության և «նոր հասարակության» ստեղծման կարգախոսներով: Այնուամենայնիվ, գոլիստների սոցիալական հենարանի առավել կայուն խավերն են խոշոր և միջին խավերը, պետական ծառայողները, սպայական որոշ շրջաններ, ազգայնականորեն տրամադրված մանր սեփականատերերը:*

Երկար տարիներ դը Գոլի (1958-1969), Ժորժ Պոմպիդուի (1969-1974) և Վալերի Ժիսկար դը Էստենի (1974-1981թթ.) պրեզիդենտության ժամանակաշրջանում գոլիստները կառավարող կուսակցություն էին և բացարձակ մեծամասնություն ունեին Ազգային ժողովում: Չնայած դրան՝ 70-ական թթ. սկզբներից կուսակցության ներսում հասունանում էր ներկուսակցական ճգնաժամը, որը հետևանք էր արտաքին և ներքին քաղաքականության շուրջն առկա լուրջ տարաձայնությունների և վեճերի: Դրան նպաստեց նաև դը Գոլի հեռանալը քաղաքական ասպարեզից և նրա մահը, որով կուսակցությունը զրկվեց իր առաջնորդից՝ կրելով բարոյաքաղաքական մեծ կորուստ: 1976թ. արտակարգ համագումարում այն վերակառուցվեց՝ ընդունելով Հանրապետությանն աջակցող միավորում անունը: ՀԱՄ-ի հիմնադիրը և անփոփոխ նախագահը Ֆրանսիայի ամենաճանաչված և հեղինակավոր քաղաքական գործիչներից Ժակ Շիրակն էր, որի անվան հետ է կապված վերակառուցված գոլիստական կուսակցության գործունեությունը[4]:

Ֆրանսիայի խոշոր կուսակցություններից վերջինը ***Միություն Ֆրանսիական Դեմոկրատիայի համար*** *(ՄՖԴ) միջկուսակցական ֆեդերացիան էր: ՄՖԴ-ն հիմնվել էր 1978թ., երբ պառլամենտական ընտրություններին միասնական ցուցակներով մասնակցելու համար դաշինք կնքեցին Ֆրանսիայի ցենտրիստական կուսակցությունները՝ Հանրապետական կուսակցությունը, Սոցիալական դեմոկրատների կենտրոնը և Ռադիկալ կուսակցությունը: Ֆեդերացիայի ամենահզոր և բազմամարդ կուսակցությունը* ***Հանրապետական կուսակցությունն*** *էր: Այն հիմնադրվել է 1977թ. Վալերի Ժիսկար դը Էստենի գլխավորած Անկախ հանրապետականների ազգային ֆեդերացիայի վերակազմավորման հիման վրա: Հանրապետական կուսակցությունը ցենտրիստական այն հզոր քաղաքական հոսանքի հետևորդն է, որը հաղթեց 1974թ. պրեզիդենտական ընտրություններում, երբ պրեզիդենտ ընտրվեց Ժիսկար դը Էստենը: Հանրապետականների քաղաքականությունը և գաղափարախոսությունը ձգտում է դառնալու լիբերալ, ռեֆորմիստական և ժամանակակից: Վերջին տարիներին հանրապետական գործիչները ավելի շատ են թեքվում դեպի լիբերալիզմը՝ պահանջելով նվազեցնել պետության դերը տնտեսության մեջ, և ավելի խիստ դիրքորոշում են ընդունել սոցիալիստների նկատմամբ: Հանրապետական կուսակցությունը ելնում է դասակարգային համագործակ-*

ցության և սոցիալական գործընկերության դիրքորոշումից, որը հանգում է ժիսկարդիստական քաղաքական գործելակերպին վերացնել երկրում ներքաղաքական լարվածությունը և հասնել համաձայնության բոլոր ուժերի հետ ցենտրիստական պլատֆորմի հիման վրա: Կուսակցության ճանաչված գործիչներն էին Ժերար Լոնգեն, Ֆրանսուա Լեոտարը և Ալեն Մոդլենը: ՄՖԴ-ի մեջ երկրորդը իր քաղաքական կշռով ***Սոցիալական դեմոկրատների կենտրոն*** *կուսակցությունն էր: Հիմնադրվել է 1976թ. Դեմոկրատական կենտրոնի և «Դեմոկրատիա և Առաջադիմություն» կենտրոնի միավորման հիման վրա: Այս կուսակցությունը հետպատերազմյան Ֆրանսիայի ամենահզոր կուսակցություններից մեկի՝ ժողովրդա-հանրապետական շարժում կուսակցության քաղաքական ժառանգորդն է, որը քրիստոնեա-դեմոկրատական բնույթի կուսակցություն էր: Սոցիալական դեմոկրատների վերջնական նպատակ էր Եվրոպայի Միավորված Նահանգների ստեղծումը, սոցիալական դեմոկրատիայի հիման վրա նոր հասարակարգի՝ պատասխանատվության և համագործակցության հասարակարգի կառուցումը: ՄՖԴ-ի մեջ երրորդը* ***Ռադիկալ կուսակցությունն էր,*** *որը զիջում էր Հանրապետական և Սոցիալական դեմոկրատների կենտրոն կուսակցություններին իր ազդեցությամբ և քաղաքական կշռով: Կազմավորվել էր դեռևս 1901թ.: Ռադիկալները գերիշխող կուսակցություն էին Երրորդ հանրապետության ժամանակաշրջանում: Նրանց առաջնորդներ էմիլ Կոմբան, էդուարդ էրիոն և էդուարդ Դալադիեն գլխավորում էին պետությունը և կառավարությունը երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում: Հետպատերազմյան շրջանում կուսակցությունը կորցրեց իր ազդեցությունը: Խորացավ ներկուսակցական ճգնաժամը, սրվեցին հակասությունները կուսակցական խմբավորումների միջև: Ռադիկալների հեղինակության անկումը կապված էր այն բանի հետ, որ նրա առաջնորդներին և հատկապես Դալադիեին ժողովուրդը մեղավոր էր համարում Ֆաշիստական Գերմանիայի դեմ կապիտուլացվելու համար: Ներկուսակցական ճգնաժամը հանգեցրեց պառակտման: 1972թ. կուսակցության ձախ թևը անջատվեց՝ հիմք դնելով Ձախ ռադիկալների շարժում կուսակցությանը, որը դաշինքի մեջ մտավ սոցիալիստների հետ: Իսկ բուն կուսակցությունը՝ Ժան-Ժակի և Սերվան-Շրեյբերի գլխավորությամբ, գնաց աջցենտրիստական և գոլիստական ուժերի հետ համագործակցության: Ռադիկալների գերխնդիրը կուսակցության քաղաքական կշռի մեծացումն է, որը նրանց ավելի մեծ ինքնուրույնություն կարող է ապահովել ՄՖԴ-ի մեջ: 2012թ. խորհրդարանական ընտրություններում ռադիկալները մասնակցեցին ինքնուրույն՝ երկու կուսակցությամբ: Ռադիկալ ձախերը ստացան 12 պատգամավորական տեղ, իսկ ռադիկալ աջերը՝ վեց [5]:*

Միություն Ֆրանսիական Դեմոկրատիայի համար միջկուսակցական ֆեդերացիայի մեջ էին մտնում նաև ***Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունը և «Պերսպեկտիվ է ռեալիտե»*** *կոչվող ակումբները, իսկ 1978թ-ից նաև անհատական անդամներ: Անհատական անդամները 1980թ. հիմնել էին իրենց կոմիտեն և ձեռք բերել համապատասխան ներկայացուցչություն ֆեդերացիայի ղեկավար մարմիններում: Անհատական անդամների ղեկավարները սուր կերպով քննադատում են Միության մեջ մտնող կուսակցություններին անջատողականության և միջկուսակցական հաճախակի կրկնվող ընդհարումների համար և կոչ են անում ՄՖԴ-ն վերածել ամուր և միաձույլ կուսակցության:*

Ֆեդերացիայի մեջ մտնող վեց բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը (Հանրապետական կուսակցություն, Սոցիալական դեմոկրատների կենտրոն, Ռադիկալ կուսակցություն, Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, «Պերսպեկտիվ է ռեալիտե» ակումբներ և անհատական անդամներ) հավասար ներկայացուցչության իրավունք ունեին ղեկավար մարմիններում քաղաքական կշռից անկախ: Այս սկզբունքը ամրապնդված էր 1991թ. ընդունված նոր կանոնադրությամբ: ՄՖԴ-ի նախագահ Վալերի Ժիսկար դը Էստենը, ինչպես նշեցինք, դարձավ Ֆրանսիայի նախագահ:

Երեք փոքր ընդդիմադիր կուսակցություններից ամենաազդեցիկը ***Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունն*** *էր: Կազմավորվել է 1920թ. սոցիալիստների Թուրինում գումարված համագումարի ժամանակ, երբ Կոմինտերնի հետ միավորման կողմ-*

նակից ձախերը անջատվեցին, իսկ 1921թ. հռչակեցին Ֆրանսիական կոմունիստական կուսակցության ստեղծումը: Հետպատերազմյան առաջին տասնամյակի ընթացքում՝ Չորրորդ հանրապետության ժամանակաշրջանում, ՖԿԿ-ն հանդիսանում էր առաջին ֆրանսիական կուսակցությունը թե՛ իր քաղաքական կշռով (մշտապես հավաքում էր ընտրողների ձայների 25 տոկոսից ավելին), թե՛ իր կազմակերպվածությամբ և թե՛ իր անդամների թվով: Առաջին անգամ ՖԿԿ-ն սկսեց զիջել դիրքերը 1953թ-ին, երբ իշխանության վերադարձավ դը Գոլը: Դրանից հետո մոտ 20 տարի՝ 1958-78թթ., կոմունիստները պահպանում էին հավասարակշռությունը՝ մշտապես հավաքելով ձայների 20 տոկոսը: 1981թ. սոցիալիստների իշխանության գլուխ անցնելուց հետո ՖԿԿ-ն սկսեց արագ կերպով անկում ապրել: 1986թ. պառլամենտական ընտրություններում 10 տոկոս, իսկ 1988թ. պրեզիդենտական ընտրություններում 7 տոկոս արդյունքներով այն վերջնականապես մղվեց երկրորդ պլան[6]:

Փոքր կուսակցություններից երկրորդը ***Ազգային ճակատ*** *կուսակցությունն էր: Հիմնադրվել է 1972թ. և հանդես էր գալիս որպես աջ ուժերի ազգային, ժողովրդական և սոցիալական կուսակցություն: Ազգային ճակատը իրեն հակադրում է մյուս կուսակցություններին և ինչպես գոլիստական, այնպես էլ սոցիալիստական կառավարությունները խիստ քննադատության է ենթարկում և չի ընդունում: Հանդես գալով ծայրահեղ ազգայնական կարգախոսներով՝ Ազգային ճակատը իր հիմնական խնդիրն է համարում պայքարը այլազգիների ներգաղթի դեմ այն դիտելով որպես մեծ վտանգ ֆրանսիական մշակույթի ազգային ինքնության համար: Իր գործունեության առաջին շրջանում Ազգային ճակատը աննշան քաղաքական խմբավորում էր, 1972-1982թթ. ընթացքում տեղի ունեցած ընտրություններում հազիվ կարողանում էր հավաքել ձայների մեկ տոկոսը: Սակայն 1983թ. Ազգային ճակատը կատարեց անսպասելի ճեղքում և հասնելով 15 տոկոսի բնագծին կարողացավ վերջնականապես կամակերպվել և դառնալ Ֆրանսիայի քաղաքական կյանքի վրա ազդող ուժերից մեկը: Այն դարձավ Ֆրանսիայի քաղաքական կյանքի սենսացիոն իրադարձություններից մեկը, որովհետև ոչ ոք չէր սպասում Ազգային ճակատի նման առաջընթացին (ինչպես երևում է աղյուսակից) և ամրապնդմանը երկրի քաղաքական արենայում[7]:*

Կուսակցությունն ունի իր ծրագիրը, որտեղ շարադրված են նրա գործունեության 16 ուղղությունները: Դրանք հիմնականում նախատեսում են ասիական ծագում ունե-

ցող էմիգրանտների արտաքսում երկրից և ֆրանսիացիների գերակայության ճանաչումը բոլոր բնագավառներում: 1991թ. հրապարակվեց Ազգային ճակատի կողմից առաջադրված գործողությունների ծրագիրը էմիգրացիայի խնդիրների լուծման համար, որը մերժվեց մյուս բոլոր կուսակցությունների կողմից: Այնուամենայնիվ Ազգային ճակատը 1983-93թթ. ընթացքում կարողացել է ձեռք բերել բավականին կայուն էլեկտորատ, որովհետև շատ ֆրանսիացիներ հավատում են, որ սոցիալ-տնտեսական չլուծված բազմաթիվ հարցեր որոշակիորեն կապված են երրորդ աշխարհից ներգաղթողների հետ: Ազգային ճակատի հիմնադիր նախագահն է Ժան-Մարի Լե Պենը, որը գլխավորում էր կուսակցությունը ստեղծման պահից և բավականին մեծ հեղինակություն ուներ ծայրահեղ ազգայնական տրամադրություններ ունեցող ընտրողների շրջանում: Նրա մահից հետո կուսակցությունը ղեկավարում է նրա աղջիկը՝ Մարին Լե Պենը:

Փոքր կուսակցությունների շարքում երրորդը իրենց քաղաքական կշռով բնապահպան կուսակցություններն էին: Ֆրանսիայում գործում էին երկու այդպիսի կուսակցություններ. «Կանաչներ» կուսակցությունը (հիմնվել է 1984թ.) և «Ժեներասիոն էկոլոժի» կոչվող կուսակցությունը (հիմնվել է 1990թ.): 2012թ. խորհրդարանական ընտրություններում Ֆրանսիայի բնապահպանների կուսակցությունը կրում էր «Եվրոպա-էկոլոգիա-Կանաչներ» անունը: Բնապահպան կուսակցությունները պառլամենտական և տեղական ընտրություններում կարողանում էին հավաքել առավելագույնը վեցից յոթ տոկոս ընտրողների ձայներ և զրկված էին քաղաքականության վրա ազդելու կայուն լծակներից: 2012թ. ձևավորված խորհրդարանում նրանք ձեռք բերեցին 17 պատգամավորական տեղ[8]:

Նոր զարգացումներ Ֆրանսիայի կուսակցական համակարգում: *1990-ական թթ. կեսերից հետո, վերջին երեք տասնամյակների ընթացքում, Ֆրանսիայում տեղի ունեցան կուսակցական ուժերի նոր տեղաշարժեր: Ճիշտ է, պահպանողական գոլիստներն ու սոցիալիստները պահպանեցին իրենց տիրապետող դիրքը և քաղաքական դաշտի աջ ու ձախ թևերի ղեկավարությունը, բայց երկրի կուսակցական համայնապատկերը նոր տեսք ստացավ: Նշենք նաև, որ նոր օրենքով նախագահի պաշտոնավարման ժամկետը կրճատվեց, յոթ տարվա փոխարեն սահմանվեց հնգամյա կառավարում, որի նպատակը առավելագույնս մոտեցնել նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամկետները և հնարավորինս բացառել երկիշխանության հնարավորությունը բարձրագույն գործադիր մարմիններում, ինչն առկա էր 1980-ական թթ.:*

Ներքաղաքական գործընթացներին հետևելով արձանագրենք, որ աջ կուսակցությունների երկարատև քաղաքական տիրապետությունից հետո 1981թ. սոցիալիստները կարողացան համոզիչ հաղթանակ տանել և՛ նախագահական, և՝ խորհրդարանական ընտրություններում: Մեծամասնությունը Ազգային ժողովում հնարավորություն տվեց նախագահ Միտերանին կառավարություն կազմել սոցիալիստներից: Կառավարության մեջ ընդգրկվեցին նաև չորս կոմունիստներ, որովհետև ՖԿԿ-ն հանդես էր եկել Միտերանի պաշտպանությամբ, որպես ձախ ուժերի միասնական թեկնածու: Միտերանը պրեմիեր-մինիստր նշանակեց սոցիալիստ Մորուային, որի կառավարությունը գոյատևեց մինչև 1984թ.: 1984-86թթ. կառավարությունը գլխավորում էր Սոցիալիստական կուսակցության ճանաչված գործիչներից Ֆաբիուսը, որի կաբինետում արդեն կոմունիստներ չկային: 1986թ. պառլամենտական ընտրություններում սոցիալիստները պարտություն կրեցին և կորցրին մեծամասնությունը Ազգային ժողովում, որից հետո ՀԱՄ-ը, ՄՖԴ-ի հետ համաձայնության գալով, իր ձեռքը վերցրեց կառավարությունը: Միտերանը ստիպված էր պրեմիեր նշանակելու իր քաղաքական հակառակորդ, ՀԱՄ-ի նախագահ Ժակ Շիրակին, որի կառավարությունը գոյատևեց 1986-88թթ.: Դա Միտերանի 14-ամյա նախագահության ժամանակաշրջանի առաջին երկիշխանական իրավիճակն էր բարձրագույն գործադիր իշխանության մեջ:

1988 թվականը Ֆրանսիայի քաղաքական նոր իրադարձությունների տարի էր: Այդ տարում տեղի ունեցան և՛ պրեզիդենտական, և՛ պառլամենտական ընտրություններ, որոնք կրկին պսակվեցին սոցիալիստների փայլուն հաղթանակով: Երկու փուլով անց-

կացված ընտրությունների արդյունքով Միտերանը հաղթանակ տարավ իր հիմնական հակառակորդներ ՀԱՄ-ի թեկնածու Շիրակի և ՄՖԴ-ի թեկնածու Բարրի նկատմամբ և երկրորդ անգամ ընտրվեց նախագահ: Դրան հաջորդած ժամանակաշրջանում սոցիալիստների ձեռքում էր նաև կառավարությունը: Պրեմիեր-մինիստրի պաշտոնում միմյանց փոխարինեցին Միշել Ռոկարը, Էդիթ Կրեսոնը (առաջին կին վարչապետը Ֆրանսիայում) և Պիեռ Բերեգովուան: Աջ և ցենտրիստական կուսակցությունների երկակի պարտությունը 1988թ. ընտրություններում, հանգեցրեց քաղաքական կուսակցությունների նոր վերախմբավորման: 1991թ. Փարիզում գումարված Հանրապետությանն աջակցող միավորում կուսակցության համագումարը երկարատև քննարկումներից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ հաստատեց այն հիմնարար ծրագիրը, որը պետք է առաջադրվեր Միություն Ֆրանսիական Դեմոկրատիայի համար միջկուսակցական ֆեդերացիային առաջիկա ընտրություններում միասնականորեն հանդես գալու համար: Ծրագիրը հիմնված էր սոցիալիստների ներքին և արտաքին քաղաքականության խոր քննադատության վրա, որը, ըստ նրա հեղինակների՝ ճգնաժամի էր հասցրել երկիրը: Երկու առաջատար աջ կուսակցությունների դաշնակցությունը դարձել էր հրամայական պահանջ և միակ հնարավոր ուղին սոցիալիստների ձեռքից իշխանությունը խլելու համար:

*Միավորման առաջին կոչը արվեց 1988թ. ՀԱՄ-ի ճանաչված գործիչներից մեկի՝ Էդուարդ Բալադյուրի կողմից: 90-ական թթ. սկզբին միավորման կողմնակիցները բավականին մեծ թիվ էին կազմում ինչպես ՀԱՄ-ում, այնպես էլ ՄԴԴ-ի մեջ: 1989թ. Եվրոպառլամենտի ընտրություններին երկու կուսակցություններն արդեն մասնակցեցին միասնական ցուցակներով և հաջողության հասան: 1989թ. ՀԱՄ-ի ղեկավար գործիչներից մեկի՝ Ալեն Ժյուպեի առաջարկով գումարվեց երկու կուսակցությունների համակարգիչ կոմիտեն, որտեղ ներկայացված էին ընդդիմադիր քաղաքական ուժերի բոլոր ներկայացուցիչները: 1990թ. հունիսին համակարգիչ կոմիտեն հռչակեց ՀԱՄ-ի և ՄԴԴ-ի միավորման մասին մեկ կոնֆեդերացիայի մեջ, որը կոչվեց **«Միություն հանուն Ֆրանսիայի»**: Սրան հաջորդեց արդեն վերոհիշյալ միասնական քաղաքական ծրագրի առաջադրումը ՀԱՄ-ի համագումարի կողմից: Ընդդիմության ղեկավարների կանխատեսումներն իրականացան: 1993թ. պառլամենտական ընտրություններում ՀԱՄ-ի և ՄԴԴ-ի նախընտրական դաշինքը հաղթանակ տարավ ջախջախիչ պարտության մատնելով սոցիալիստներին: Իշխող կուսակցության ներկայացուցիչներին հաջողվեց շահել Ազգային ժողովի 577 պատգամավորական տեղերից միայն 66-ը: Շիրակը, որը Միտերանի ամենամոլի հակառակորդներից էր, համառորեն պահանջում էր սոցիալիստ-նախագահի հրաժարականը: Այդ պահանջներին Միտերանը պատասխանեց նրանով, որ պրեմիեր-մինիստր նշանակեց ոչ թե Շիրակին, այլ նրա կուսակից Էդուարդ Բալադյուրին: Ընդդիմությունը կրկին իր ձեռքը վերցրեց կառավարությունը և Միտերանը երկրորդ անգամ ստիպված էր հանդուրժելու երկիշխանությունը: 1993թ. հաղթանակը ավելի ամրապնդեց աջ և ցենտրիստական կուսակցությունների կոնֆեդերացիան, որի գործունեության հաջորդ երկու տարիները ամբողջությամբ նպատակաուղղված էին նախագահական ընտրությունների նախապատրաստմանը:*

*Քաղաքական մեծ ակտիվությամբ Ֆրանսիայի քաղաքական կուսակցությունները անցկացրին 1995թ. նախագահական ընտրությունները: Միմյանց դեմ պայքարում էին 9 թեկնածու, որոնցից երկրորդ փուլ հաջողվեց անցնել սոցիալիստ Լիոնել Ժոսպենին և **«Միություն հանուն Ֆրանսիայի»** թեկնածու Ժակ Շիրակին: Երկրորդ փուլում հավաքելով ձայների 52 տոկոսը, Ժակ Շիրակը հաղթանակ տարավ, որով էլ վերջնականապես ավարտվեց Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության 14-ամյա տիրապետության ժամանակաշրջանը: Նոր պրեզիդենտ **Ժակ Շիրակը** պրեմիեր-մինիստր նշանակեց ՀԱՄ-ի առաջատար գործիչներից Ալեն Ժյուպեին: Սակայն 1995թ-ը մատուցեց մեկ այլ անակնկալ: Այդ տարի հունիսին Ֆրանսիայում տեղի ունեցան ինքնավարության օրենսդիր մարմինների ընտրություններ: Ոչ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը, ոչ էլ աջ կուսակցությունների դաշինքը, հոգնած նախագահական լարված ընտրություններից, չկարողացան արժանի կերպով մասնակցել դրանց: Օգտա-*

գործելով ինչպես այս հանգամանքը, այնպես էլ սոցիալիստների՝ մի կողմից և գոլիստների ու ցենտրիստների՝ մյուս կողմից, միջև եղած հակամարտությունը, Ազգային ճակատը կատարեց իր երկրորդ ճեղքումը և տոկոսային հարաբերությամբ կարողացավ բոլորից շատ տեղեր ձեռք բերել մունիցիպալիտետներում:

*2002թ. նախագահական ընտրությունների ժամանակ Ֆրանսիայի աջ կենտրոնամետ կուսակցությունների ողջ սպեկտրը, որը նախկինում միավորված էր **«Միություն հանուն Ֆրանսիայի»** կոնֆեդերացիայի մեջ, ժակ Շիրակի ղեկավարությամբ վերակառուցվեց՝ ստանալով **Միություն հանուն ժողովրդական շարժման** (կարելի թարգմանել նաև Միություն ի պաշտպանություն ժողովրդական շարժման, ֆրանսերեն հապավումը՝ UMP-Union pour un movement populaire) քաղաքական նոր կազմավորման մեջ: Այն կրկին առաջադրեց ժակ Շիրակի թեկնածությունը, որը երկրորդ փուլում ստացավ ընտրողների ձայների 82,21 տոկոսը և կրկին հաղթանակ տարավ: Կազմվեց աջ պահպանողականների նոր կառավարություն ժան-Պիեր Ռաֆֆարենի գլխավորությամբ: Անակնկալն այն էր, որ երկրորդ փուլ դուրս եկավ ոչ թե սոցիալիստների թեկնածուն, այլ Լե Պենը: 2007թ. հունվարի 14-ին կուսակցության համազգային համագումարի պատգամավորների 98 տոկոսը կողմ քվեարկեց առաջիկա նախագահական ընտրություններում Նիկոլա Սարկոզիի թեկնածության օգտին: Այս առաջադրումը էական նշանակություն ուներ կուսակցության ամրապնդման և միասնության համար: Երկարատև ներկուսակցական պայքարը Շիրակի և Սարկոզիի խմբավորումների միջև ավարտվեց վերջինիս հաղթանակով: Սարկոզիի թեկնածությունը պաշտպանեցին Ալեն Ժյուպենը, էքսվարչապետ Ռաֆարենը և մյուս ղեկավար գործիչները[9]: Նիկոլա Սարկոզին հավաքեց 31,8 տոկոս առաջին փուլում և 53,06 տոկոս երկրորդ փուլում և մայիսի 16-ին ստանձնեց Ֆրանսիայի նախագահի պաշտոնը: Միություն հանուն ժողովրդական շարժման կուսակցությունը հաղթեց նաև խորհրդարանական ընտրություններում, որը հնարավորություն տվեց Սարկոզիին իր կուսակից Ֆրանսուա Ֆիյոնին նշանակել վարչապետ: Աջերի կառավարությունը 2007-12 թթ. իրականացրեց մի քանի ոչ ժողովրդական բարեփոխումներ, որոնք գցեցին կուսակցության վարկանիշը և արդյունքում բավականին երկարատև քաղաքական տիրապետությունից հետո աջերը 2012 թ. պարտվեցին: Բացահայտվեցին նաև նախագահական ընտրարշավի ֆինանսական լուրջ խախտումներ, կրկին սրվեց ներկուսակցական պայքարը և կուսակցության լիդերությունը իր ձեռքը վերցրած ժան-Ֆրանսուա Կոպեն հրաժարական տվեց: Դրանից հետո ստեղծվեց կոլեկտիվ ղեկավար մարմին նախկին էքսվարչապետներ Ժյուպեի, Ռաֆարենի և Ֆիյոնի մասնակցությամբ, որոնք նույնպես չկարողացան հաղթահարել ներկուսակցական ճգնաժամը[10]: Օգտվելով կուսակցության ղեկավարության մեջ հակասությունների սրումից՝ Սարկոզին կրկին անցավ ղեկի: 2014 թ. նոյեմբերին նա ընտրվեց Միություն հանուն ժողովրդական շարժման կուսակցության նախագահ և հայտարարեց կուսակցության արմատական վերակառուցման իր ծրագրերի մասին[11]:*

Աջերի պարտությունը 2012 թ. նախագահական և խորհրդարանական ընտրություններում, որպես կանոն, նշանավորվեց սոցիալիստների և նրանց դաշնակից ձախ թեքման փոքր կուսակցությունների հաղթանակով: Եթե 2007 թ. սոցիալիստների կին թեկնածու Սեգոլեն Ռուայալը, երկրորդ փուլում հավաքելով ձայների 46,94 տոկոսը, պարտվել էր Սարկոզիին, ապա նոր թեկնածու Ֆրանսուա Օլանդը 2012 թ. 51,64 տոկոս ցուցանիշով համոզիչ հաղթանակ տարավ և դարձավ Ֆրանսիայի պատմության մեջ երկրորդ սոցիալիստ նախագահը[12]: Իր նախընտրական ծրագրում Օլանդը խոստացավ օգնել փոքր և միջին ձեռնարկատերերին, օժանդակել բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, պաշտպանել հանրային սեփականության ձեռնարկություններին, բարձրացնել հարուստ ֆրանսիացիների հարկերը, կառուցել սոցիալական և ուսանողական 2,5 մլն բնակարան, բարեփոխել առողջապահական համակարգը, ստեղծել 150000 աշխատատեղ և այլն[13]:

Ֆրանսիայի ձախ քաղաքական կուսակցություններին հաջողություն էր սպասվում նաև խորհրդարանական ընտրություններում: 2012թ. հունիսի 17-ին կայացած խորհր-

դարանական ընտրությունների երկրորդ փուլում սոցիալիստներն ու նրանց դաշնակիցները ներկայացնող թեկնածուները հանրապետության Ազգային ժողովում ստացան պատգամավորական տեղերի ճնշող մեծամասնությունը (577 պատգամավորական տեղերից 314-ը, ինչը 25 մանդատով գերազանցում էր բացարձակ մեծամասնությունը): Միություն հանուն ժողովրդական շարժման կուսակցությունը նորընտիր խորհրդարանում ուներ 194 պատգամավոր[14]: Քաղաքական կուսակցությունների նման ներկայացուցչությունը արդեն բացառում էր երկիշխանությունը:

Ֆրանսիայի կուսակցական համակարգում վերջին հեղաշրջիչ իրադարձությունը 2017թ. նախագահական ընտրություններն էին: Առաջին անգամ հետպատերազմյան Ֆրանսիայի պատմության մեջ ավանդական կուսակցությունները, որոնք վեց տասնամյակ շարունակ տնօրինում էին երկրի քաղաքական իշխանությունը, դուրս մղվեցին և հայտնվեցին լուսանցքից դուրս: Պայքարի մեջ ընդգրկվել էին սոցիալիստների թեկնածու Բենուա Ամոնը, «Անհնազանդ Ֆրանսիա» դաշինքի առաջնորդ Ժան-Լյուկ Մելանշոնը, Սարկոզիի կուսակից աջերի «Հանրապետականներ» անունը ստացած դաշինքի թեկնածու Ֆրանսուա Ֆիյոնը, «Ազգային ճակատ»-ի առաջնորդ Մարին Լե Պենը և «Առաջ» դաշինքի թեկնածու Էմանուել Մակրոնը[15]: Էկոնոմիկայի նախկին նախարար Էմանուել Մակրոնը, որը նախկինում երբևիցե չէր եղել ընտրովի պաշտոնում, փոթորկեց քաղաքական դաշտը: Հաղթելով նախագահական ընտրություններում նոր քաղաքական ուժի թեկնածուն կոտրեց նաև անցյալից եկող կարծրատիպերը՝ ապացուցելով, որ երիտասարդ գործիչները նոր ծրագրերով կարող են շատ ավելին անել, քան ավանդական, հին գաղափարական կուսակցությունները:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆրանսիայի կուսակցական համակարգում տեղի ունեցած գործընթացները նկարագրված են ըստ Саличев С. С. Французская социалистическая партия в период между двумя мировыми войнами /1921-1940/, М., 1973; Саличев С. С. Идеология и политика Французской социалистической партии /1944-1964/, М., 1966; Макаренкова Е. М. Французская социалистическая партия в годы 4-ой республики , М., 1973.
2. Шарло Ж. Политические партии и система политических партий во Франции /изд. посольства Франции/, М., 1993, стр.5.
3. Տե՛ս նույն տեղում էջ 7
4. Տե՛ս նույն տեղում էջ 15
5. Новый состав Национального собрания Франции /18-06-2012/ http://ru.rfi.fr/obshchii/20120618-novyi-sostav-natsionalnogo-sobraniya-frantsii/
6. Шарло Ж., նույն տեղում, էջ 35
7. Выборы во Франции: объяснение в графиках / **https://news.mail.ru/card/93/**
8. Новый состав Национального собрания Франции/ 18-06-2012/ http://ru.rfi.fr/obshchii/20120618-novyi-sostav-natsionalnogo-sobraniya-frantsii/
9. Michele Alliot-Marie se retrie et soutient Sarkozy, 20.11.2007 (http://www.lefigaro.fr/politique/2007/01/12/01002-20070112ARTWWW90514-sarkozy_annonce_le_retrait_de_michele_alliot_marie.php)
10. Новый лидер партии UMP будет избран во Франции, фаворит-Саркози. 29.11.2014 (http://ria.ru/world/20141129/1035708177.html)
11. Саркози избран лидером крупнейшей оппозиционной партии Франции.29.11,2014 (http://ria.ru/world/20141129/1035791248.html)
12. Франсуа Олланд вступил в должность президента Франции (http://www.bbc.co.uk/russian/rolling_news/2012/05/120515_hollande_fransce.sh

tml) Русская служба Би-би-си (15 мая 2012)
13. Le projet (http://www.parti-socialiste.fr/dossier/le-projet-defrancois-hollande).
14. Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի տեղերի մեծամասնությունն ստացել են ձախ կուսակցությունները ներկայացնող թեկնածուները, 18.06. 2012 /http://armenpress.am/arm/print/684817/fransiayi-khorhrdarani-storin-palati-texeri-metsamasnutyunn.html/
15. Выборы во Франции: обьяснение в графиках / https://news.mail.ru/card/93/

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Քաղաքական գործընթացները Ֆրանսիայի կուսակցական համակարգում
(պատմաքաղաքագիտական ակնարկ)
Գարիկ Քեռյան

Ֆրանսիայում մինչ 1990-ական թթ. կեսերը հատկապես առանձնանում էին երեք խոշոր կուսակցություններ, որոնք պառլամենտական ընտրություններում հավաքում էին ընտրողների ձայների 20 տոկոսից ավելին, և երեք փոքր ընդդիմադիր կուսակցություններ, որոնք հավաքում էին ընտրողների ձայների 10-15 տոկոսը: 2017թ. նախագահական ընտրություններում առաջին անգամ հետպատերազմյան Ֆրանսիայի պատմության մեջ ավանդական կուսակցությունները, որոնք վեց տասնամյակ շարունակ տնօրինում էին երկրի քաղաքական իշխանությունը, կորցրին իրենց դիրքերը:

РЕЗЮМЕ
Политические процессы в партийной системе Франции
(историко-политологический очерк)
Гарик Керян

Ключевые слова: Франция, партии, партийная система, многопартийность, Саркози, Оланд, Макрон, Ле Пен.

До половины 1990-х годов во Франции отличались три политические партии, которые в парламентских выборах набирали до двадцати процентов голосов избирателей. Рядом с ними существовали также три малые партии с результатом голосов в 10-15 процентов. В президентских выборах 2017 года впервые в истории послевоенной Франции руководящие партии после шестидесятилетнего политического правления потеряли свои позиции.

SUMMARY
Political processes in the party system of France
(Historical and Political Essay)
Garik Keryan

Keywords: France, parties, party system, multi-party system, Sarkozy, Oland, Macron, Le Pen.

Until the half of the 1990s, three political parties prevailed in France, which gained up to 20 percent of electoral votes in the parliamentary elections. Next to them, there were also three small parties that got 10-15 percent of votes. During the 2017 presidential election, for the first time in the history of post-war France, traditional parties lost their positions after 60 years of political rule.